Գործերի յանձնատ

ՏԵԼԵՖՈՆ № 282

Լոյս է տեսնում շաբաթը մի անգամ կիրակի օրերը

№ 42 կիրակի հոյեմբերի 4 | տասնեւերկուերորդ տարի 1901

ՇԱԲԱԹԱԿԻՈՒՄ Է 1901 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Աղբիւրի տարեկան գինը **3** րուբ. *Տարազինը* **6** ր.։
Հասցէ՝ Тифлисъ, редакція иллюстр. журн. АГВЮРЪ-ТАРАЗЪ կամ *Tiflis* (Caucase) Réd. des jour. Agbur et Taraz.

ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶԻ *խմբագրատունը և գրասենեակը տեղափոխած են Օլգինսկայա փողոց տ. № 31, Ջինտրա կան նահանգական տեսանի Հանդէպ։ Խմբագրութեան գրասենեակը (բացի կիրակի եւ տօն օրերից) բաց է առ. 10 ժ. —2¼ ժ. կէսօրից յետոյ։ Անձնական տեսակցութիւն խմբագրի հետ երեքշաբթի և ուրբաթ առ. 11—12 ժ.։*

Արեւս եւ գիտութիւն

ԱՊԱԴՅԻ ՏՊԱՐԱՆԸ

II

Անցեալ անգամ շեշտեցի, որ կոբեկտուրային, տառասխալի հարցն է այժմ խոչընդոտն հանդիսանում արձիճի տառերն լսպառ ոչնչացնելու և նրանց փոխարինելու նորահնար, բայց դեռ ոչ բոլորովին կատարելագործուած գրող մեքենայով։

Պէտք է ասեմ, որ տառասխալը, եթէ հանուելու լինի շարուածքից և նրա տեղը մի ուրիշ տառ կպցնելու, այդ դէպքում, որքան էլ զգոյշ, նոյն իսկ յատուկ մեքենայով կպցնելու լինէք, կերևայ կպցրուածը, եթէ ոչ հասարակ աչքով՝ բայց խոշորացոյցով անպատճառ։ Ուրեմն դժի դոյութիւնը, նոյն իսկ միկրոսկոպով միայն երեւացող, լուսանկարելիս անցնելու է կաշւի, կամ թաւխանցիկ թղթի վրայ, որից և պէտք է արտատպուին գրքերը, թէ հանդէսները։ Ահա հէնց այդտեղ էլ ոչինչ չի կարելի անել։ Ոչ մի հնարով չի կարելի այդ գծերը, մի տառի առնչան բարձրութիւնը, կամ ցածր լինելն ուղղել։ Հասարակ հրատարակութիւնների համար առայժմ այդ ձևով ի հարկէ աւելի կարելի է եղած դնալ և աւելի քիչ աչքի կրնկնի, քան այն խայտառակ տպագրութիւնները, որ այժմ մենք ունենք։ Բայց քանի որ հարցը **cas մաթուր**, առագ, էժան տպագրութեան և ամենազիտաւորն՝ այժմեան դրաշարների՝ տպարանական բանւորների առողջութեան և կեանքի մասին է, ուրեմն ոչ մի կէտ բաց չըպիտի մնայ։

Նախորդ անգամ ասացի նոյնպէս, որ պատկերազարդ հրատարակութիւնների գործը պիտի աւելի հեշտանայ և աւելի լայն տարածումն գտնի։

Այդ ևս լինելու է դարձեալ էլէֆտրիկի եւ լուսանկարչութեան միջոցով։ Հեռագիրը մի քանի ժամւայ մէջ աշխարհի ամեն ծայրից մեզ բերում է մանրամասն լուր, տեղեկութիւններ։ Բայց դրա հետ

մենք չենք ստանում միաժամանակ և կատարած գործողութեան պատկերները։ Պէտք է սպասենք շաբաթներ, ամ՛սներ, մինչև մեզ հասնեն այնտեղից պատկերներ, որ կլուծեներ շինենք և արտատպենք մեր հանդէսներում։

Ինչպէս որ այժմ մեզ տարօրինակ չի թւում հեռագրով թղթակցութիւն ստանալը և ուղարկելը, այնպէս և թող չզղարմանայ ընթերցողը, եթէ վաղը այդ հեռակիրը բերի միաժամանակ և պատկերները, այն էլ իրանց իսկական գոյներով։ Այս գլուխը արուած է արդէն, միայն չէ յարմարցրած տպարանին և հեռագրին։ Իսկ անշուշտ այդ իսկոյն կըլյարմարացնուի, երբ արճիճի տառերը կըկորչեն և կըսկսուի էլէfsրիկի տպագրութիւնը։ (Ըղպէտք է շփոթել այն էլէկտրիկ անւանուող տպարանների հետ, որոնք միայն իբրև այժ են ստանում նրանից անիւները պտոյտ տալու համար)։ Այդ էլէքտրիկը, գոյնզգոյն մուր և միաժամանակ աշխարհի հեռաւոր ծայրերից, ինչպէս հեռագիր տպւածից պատճէններ պիտի տայ։ Լոյս աշխարհ չի եկել այդ տպարանը, բայց երկունքի մէջ է։ Ասածներս ֆանտազիա չէ, իրագործելի, բայց տարաբախտաբար ոչ մեր աշխարհում։ Հէնց այդ պատճառով էլ ես թեռւցիկ դաղափար տալու համար, միայն առայժմ հաղորդում եմ իմ մտոլմունքը։

Գալով հասարակ լրագրներին, նրանց գործը շատ է հեշտանալու։ Թղթի գործարանները իրանց $^{9}/_{10}$-ական պատւէրներից զրկւելու են։ Ամենամեծ լրագրների մի երեսը հազիւ թէ բաց նամակի մի երեսի չափ տեղ բռնի։ Յարմար են լինելու այդ լրագրները ծոցում պնելու և պիտի կարդալ յատուկ խոշորացոյցներով։ Պոստն էլ կորուստներ է ունենալու, բայց փոխարէնը տելեֆոնը, մանաւանդ սինեմոդրաֆիան ու ֆոնոդրաֆին ահագին քայլեր են անելու, շաղկապելու են ապագայ տպարանի հետ ու պիտի կազմեն մի ամբողջութիւն. թէ ինչպէս, այդ միւս անգամ։

Տ. Ն.

ՉԱՐԲԱԽՏ

(Robert Blorfield)

—

Անողոք բախտի կիզիչ խորշի տակ
Իմ նորաբողբոջ թերթիկը թօշնեց.
Անողոք բախտի կիզիչ խորշի տակ
Իմ նորաբողբոջ թերթիկը թօշնեց։

Իմ բունն էր ուղիղ, աճումըն ուժեղ,
Իմ թարմ ծաղիկն էր անուշ խնկարկում.
Գիշերւայ ցօղին, լուսաշաղ օրին,
Կենսուրախ շնչով ես էի ծաղկում։

Բայց դաժան խորշը անողո՛ք բախտի
Իմ ողջ ծաղիկը հիմքից տապալեց.
Բայց դաժան խորշը անողո՛ք բախտի
Իմ ողջ ծաղիկը հիմքից տապալեց։

Մ. Թառայէլեան

ՄԱՐԴ ՊԱՏՇԱՆԻ ՄԷՋ *)

Զոլա

—

(Ս. Հախովից)

Եւ երկուսն էլ անհետացան։ Իմ Բէլիկովը կանայիք ոպիտակ փոխւեց և մնաց քար կտրած։ Կանգ առաւ և նայում է ինձ վրայ...

—Խնդրեմ, այս ինչ բան է—հարցրեց նա.—կամ գուցե աչքերս են ինձ խաբում։ Մինէ գիմնազիայի ուսուցչին և կանանց վայել է վելոսիպէդով մանգալ։

—Այստեղ անվայել ինչ կայ—ասացի ես։—Եւ թող իրանց քէվին շրջեն։

—Բայց ինչպէս կարելի է—բացականչեց նա, ապշելով հանկստութեանս վրայ։—Ի՞նչ էք ասում։

—Եւ այնպէս ապշած էր, որ նա չըկարողացաւ առաջ գնալ ու վերադարձաւ տուն։

Միւս օրը նա ամբողջ ժամանակ ջղային դրութեան մէջ ձեռներն իրար էր շփում և սարսռում էր. դէմքից երևում էր, որ նա առողջ չէ։ Եւ պարապմունքը կիսատ թողեց ու հեռացաւ, որ նրա կեանքում առաջին անգամն էր պատահում։ Եւ չըճաշեց։ Իսկ երեկոյեան դէմ տաք հագնուեց, թէև դուրսը բոլորովին ամառւայ եղանակ էր և ոտները քարշ տալով գնաց Կովալենկոների մօտ։ Վարինկան տանը չէր, միայն եղբօրը տանը գտաւ։

—Նստէք, խոնարհաբար խնդրում եմ,—սառն և օնքերը կիտելով ասաց Կովալենկոն. նրա դէմքը քնա-

*) Տես Տարազ № 40.

թաթախ էր, հէնց նոր էր ճաշից յետոյ հանդստացել և բոլորովին քէֆ չունէր։

Բէլիկովը մօտ տասն րոպէ լուռ նստեց և ապա սկսեց.

—Ես ձեզ մօտ եմ եկել, որպէս զի սիրտս մի քիչ թեթևացնեմ։ Ինձ համար շատ ծանր է։

Մի ինչ որ պասկիլիանտ Ծիծաղաշարժ դրուեթեան մէջ նկարել է ինձ, և մի ուրիշ, մեղ երկուսիս մերձաւոր անձի ևս։ Պարտք եմ համարում հաւատացնել ձեզ, որ ես երբէք այդ բանում մեղաւոր չեմ... Եւ ոչ մի առիթ չեմ տուել այդպիսի ծաղրի,—րնդհակառակ՝ միշտ պահել եմ ինձ միանդամայն օրինաւոր մարդու նման։

Կովալենկոն լուռ, փքւած նստել էր։ Բէլիկովը մի քիչ սպասեց և մեղմ ու տխուր ձայնով շարունակեց.

—Դեռ մի բան ունեմ ձեզ ասելու։ Ես վաղուց եմ ծառայում, իսկ դուք նոր էք սկսում ծառայել, և ես պարտք եմ համարում, ինչպէս աւագ ընկեր, նախազգուշացնել ձեզ։ Դուք վելոսիպէդով էք զբօսնում, իսկ այդ զարմուհիները բոլորովին վայել չէ պատանիների դաստիարակչին։

—Ի՞նչու համար—հաստ ձայնով հարցրեց Կովալենկոն։

—Մխիթէ դեռ բացատրութեան կարիք կայ, Միխայիլ Սաւիչ, միթէ այդ հասկանալի չէ։ Եթէ ուսուցիչը վելոսիպէդով է ման գալիս, այն ժամանակ աշակերտներին ինչ է մնում անել։ Նրանց մնում է գլխի վրայ ման գալ։ Եւ եթէ այդ մի անգամ շրջաբերականով թոյլ չէ տուած, ուրեմն անկարելի է։ Ես երկու սարսափեցի... երբ ձեր քրոջը տեսայ, աչքերս մթնեցին։ Կին կամ աղջիկը վելոսիպէդի վրայ—Աստուած իմ, այդ զարհուրելի է։

—Իսկապէս դուք ինչ էք ուզում։

—Ես միայն մի բան եմ ցանկանում—զգուշացնել ձեզ, Միխայիլ Սաւիչ։ Դուք ջահել մարդ էք, ազգակից ունէք, պէտք է ձեզ շատ, շատ զգոյշ պահէք, իսկ դուք գանցաուրեթեան էք տալիս ձեր պարտականութիւնները. ասես, ինչպէս դուք արհամարհում էք, դուք աստղնագործ շապիկով էք ման գալիս, միշտ փողոցում ինչ որ դրքերով, իսկ հիմա էլ վելոսիպէդով։ Թէ դուք և թէ ձեր քոյրը վելոսիպէդով էք շրջում, դիրեկտորը կխմանայ, չետոյ հոգաբարձի ականջին կրհասնի... Դրանից ինչ օգուտ։

—Որ ես և քոյրս վելոսիպէդով ենք զբօսնում, ում ինչ գործն է- ասաց Կովալենկոն և շառագունեց։—Իսկ ով որ իմ տնային և ընտանեկան գործերի մէջ կրհամարձակուի խառնել, այն ժամանակ ես նրա հէրը կանիծեմ։

Բէլիկովը դունատուեց և տեղից վերկացաւ։

—Եթէ դուք ինձ հետ այդպիսի տոնով էք խօսում, այն ժամանակ ես չեմ կարող շարունակել, —ասաց նա։

—Եւ խնդրում եմ իմ ներկայութեամբ իշխանութեան մասին այդպէս չխօսէք։ Դուք չարգանքով պիտի վերաբերուէք դէպի իշխանութիւնը։

—Մխիթէ ես որևէ վատ բան եմ ասում իշխանութեան դէմ, հարցրեց Կովալենկոն չարացած նայելով նրա վրայ,—իմ դրեմ ինձ հանգիստ թողէք։ Ես ազնիւ մարդ եմ և այդպիսի պարոնի հետ, ինչպիսին դուք էք, չեմ կամենում խօսակցել։ Ես լրտեսներին, լուր տանողներին չեմ սիրում։

Բէլիկովը շփոթուեց և սարսափահար դէմքով սկսեց շտապով հագնել։ Չէ որ կեանքում առաջին անգամն էր լսում այդպիսի կոպիտ խօսքեր։

—Կարող էք խօսել, ինչ որ ձեզ հաճելի է, ասաց նա դուրս գալով նախասենեակից դէպի սանդուղքը։ Ես պատրաստ եմ միայն ձեզ զգուշացնել՝ դուցէ—որևէ մէկը մեզ խօսելիս լսել է և որպէս զի մեր խօսակցութիւնը բերանի մաստակ չդառնայ և մի ինչ որ բան դուրս չդայ, ես պիտի մեր խօսակցութեան գլխաւոր կէտերը յայտնեմ մեր դիրեկտորին։ Ես ստիպուած եմ այդ անել։

—Յայտնիլ, գնա իմաց տուր։

Ա. Բարուրչան

(Կրշարունակուի)

ՀԻՆ ԳԱՂՈՒԹԸ

(Ճանապարհորդի յուշեր)

Գլուխ առաջ.—Բարք ու վարք.—Կրթական.—Վարչական.

Համայն գլուղացոց գլխաւոր աշխատութիւնն ու ապրուստի միջոց հայթայթողը Ծխախոտի մշակութիւնն է։ Ծխախոտից յետոյ գալիս են ցորենն ու լազուտը (եգիպտացորենն)։ Այս վերջին երկու տեսակ ցորենների մշակութիւնը բոլորովին անկարևոր մի տեղ է գրաւում։ Ցորեն միայն նրբանք են մշակում՝ որոնք միջոց չունեն Ծխախոտ հասցնելու։

*) Տես Տարազ № 40.

Ըստերն էլ միայն այնքան են ցանում որ միայն իրանց տան հացը պատրաստեն և չըստիպուին ուրիշից գնելու։ Իսկ որովհետև ցորենի փութը որքան որ արժէ եգիպտացորենը, միշտ նրա կէս դինն է արժում, այդ պատճառաւ էլ տներում առհասարակ գործ են անում լազուտ հացը։ Այս լազուտ հացը, որ օտարների համար երբէք դուրեկան չէ, ընդհակառակը տեղացոց համար շատ դուրեկան է։ Եւ սրբա հրապոյրը միւս ցորենից էժան լինելը չէ միայն։ Ասում են թէ, եգիպտացորենի հացը միւս ցորենի հացից շատ աւելի սննդարար է և դիւրամարս։ Կարող է լինել. միայն թէ ինչ եղանակով որ պատրաստում են այդ լազուտ հացը, իր գործածական վիճակին մէջ իսկ, շատ կոշտ է։

Ծխախոտն, ինչպէս ասացինք, այդ հայ գիւղօրէից միակ արտադրութիւնը՝ մեծ քանակութեամբ պատրաստուում և վաճառուում է քաղաքացի վաճառականաց։ Ծխախոտի ամենից ստորին տեսակի փութը 5 րուբլուց սկսած՝ մինչև ամենաառաջին տեսակն արժում է 15—20 րուբլի, նայած ժամանակին, տեսակին և պատրաստութեան եղանակին։

Ծխախոտի նախապատրաստական աշխատութեանը համար տեղացիք միայն չըբաւականանալուն, օտար քաղաքացի և օտար երկրացի բազմաթիւ աշխատաւորներ էլ գալիս են։ Այս պանդուխտները միայն հայեր չեն, լինում են և յոյներ, վրացի—

մինկրէլներ և թուրքեր։ Այս բանուորների օրական վարձքն է ուտեստով միասին 50 կոպէկից սկսած մինչև մէկ րուբլի, և երբեմն էլ աւելի։

*

Թողնենք դիւդատնտեսական մի կարգ շահաւէտ գործերը, որոնք պրեթէ բոլորովին անտես առնուած են յափշտակելով միմիայն նխալոտի գործով։ Ճշմարիտ է, թէ նխալոտի գործը արդիւնաւէտ գործ է, բայց արդիւնաբերութեան եղանակներն էլ դեռ կարօտ են բարեփոխութիւնների։ Եւ այդ բարեփոխութիւնների պակասը զգալի է մանաւանդ այժմ բոլորովին։ Անշուշտ որոշ չափով կարող են օգտել, եթէ Թիֆլիսում երբեմն կայացող նխալոտագործների ժողովներում գոնէ պատգամաւորներ ուղարկեն, պատգամաւորներ՝ որոնք լինեն բանիբուն, հասկացող։ Ի՞նչու չեն աշխատում նաև հասցնել այդ գործին յատուկ մասնագէտներ. ես կարծում եմ թէ դա այնքան էլ մի մեծ զոհողութեան չի կարօտիր և կարող են ունենալ՝ ընդհանուր մասնակցութեամբ։ Արդիւնաբերութիւնն աւելի արդիւնաւէտ, շահաբեր լինելու համար անպայման հարկաւոր է զարգացումն ու կատարելագործումը։ Եթէ մի քանի տարիներ էլ ուր որ են՝ մնան սյնտեղ, կարող է պատահել որ ուրիշ կողմեր նխալոտ մշակողների հետ չկարողանան այլևս մրցել։ Իսկ այդ չետամնացութիւնն իրանց վրայ անկասկած շատ թանգ կընստի։

Ցետոյ, կարելի է գիւղերի մէջ և շրջակաները փոխանակ անպտուղ, վայրի ծառեր տնկելու, հասցնել պատուաստու ծառեր, որոնք իրանց բացարձակ չգոյութեամբն այժմ են ընկնում։ Մանաւանդ կարելի է ամենայն կողմ շատացնել թթենիները և ընդհանրացնել շերամապահութեան շահաւէտ գործը։

Շերամապահութեան գործի սկիզբն արդէն դրել են Սուխումի մօտ գտնուղ գիւղերում մի քանի պերման ընտանիքներ, որոնք և հաստատել են։ Ինչու մերոնք ևս չըհետևեն, երբ դժւար մի արհեստ չէ, և կարող են շատ դիւրութեամբ սովորել հմուտ և փորձառու մի շերամապահից գործնական դասեր առնելով։ Ճիշտ այս կերպ են սկսել շերամապահութիւնը սովորել Արարատեան դաշտի հայ գիւղացիները։

Անասնապահութիւնը նոյնպէս շատ սահմանափակ վիճակի մէջ է գտնուում։ Կանոնաւոր անասնապահութեան տակ բազմակողմանի օգուտների մասին իրանք դիւզացիք անշուշտ շատ աւելի լաւ գաղափար կունենալ քան թէ մենք։

Համբակի շահաբեր մշակութեանն ևս կարելի է ձեռնարկել, և եթէ ոչ արտածել՝ գէթ իրանց պէտքերի համար գործադրել։

Այս գիւղացիք սաստիկ վնասում են իսկապէս, երբ իրանց տների համար հարկ եղած ամենայն տեսակ պիտոյքները դնում են բազարից գնելու։ Գնում են քաղաք պիտոյքների համար, և գնած նիւթերին սահսարակ վճարում են շատ թանգ, երբեմն եռապատիկ և չորապատիկ գներ, թողնենք փոխադրութեան ըժւարութիւններն ու ծախսերը։

Մենք խորհուրդ ենք տալիս իրանց գոնէ իւրաքանչիւր գիւղամէրի կենդրոնում բաց անել ընդհանուրի մասնակցութեամբ և ընկերակցութեամբ մր-մի վաճառանոց։ Այդ վաճառանոցների դրամագլուխը կարելի է հայթայթել ծախսած նխալոտներից միանդամ ստացած փոդերից։ Եւ վաճառանոցում կունենան ի հարկէ այն ամեն պիտոյքները, որոնց կարիք կունենան շարունակ և ստիպուում են գնալ քաղաքից գնելու։ Սա մի ձեռնարկ է, որով ոչ միայն դրած դրամագլուխը ինքնին կըշահագործուի, այլ նաև բոլորը հաւասարապես և մշտապէս կունենան սան համար հարկ եղած ամեն կարգի պիտոյքները, թէ ժամն, թէ թարմ և թէ մաքուր։

Ապա մի ուրիշ անհրաժեշտ պարագայ, որ նոյնպէս անուշադիր մնացել է մինչև այժմ։ Դա պիղտկան գործատարների չգոյութիւնն է։

Յայտնի է, թէ այդ պիղտցիք միշտ կապած են և կախումն ունին ոչ միայն իրանց դրամ փոխ տուող քաղաքացի վաշխառուներից, այլ նաև մշակելիք հողերի կապալառուներից և նխալոտները գնող վաճառականներից։

Ամենայն տեղ և ամեն ժամանակ էլ վաշխառուների ինչ աստիճան գիւղացիներին հարստահարելը յայտնի է, և այդ „ճարիք անել և օգնութեան հասնել» այլ ևս սովորական դարձած դիմակին տակ։ Չատ է խօսւել այդ մարդակերպ հրէշների գործած աւերումների և շուրջերնին փռած թշուառութիւնների մասին, իսկ դարմանն և կամ օգուտ չափազանց քիչ է առաջ եկել։

Արդ՝ այդ տխրահռչակ վաշխառուներից ոչ նուազ տխուր հռչակ են ըստացել նաև կապալառուներն ու մանաւանդ նխալոտ պնող վաճառականները։ Այս վերջինները միշտ աշխատում են խոր թող տալ և միամիտ գիւղացիներին, և օգտել նրանց արբեն-բրտնելով երևան բերած տրդիւնագործութիւններից։

Պիղտկան գործակատարների պատյութիւնը միայն կարող է այդ բոլոր չարիքներին ու հարստահարութիւններն առաջքն առնել։ Տարակոյս չըկայ թէ իւրաքանչիւր գիւղամէրի համար նշանակած գործակատարի անմեղական ուղղամտութեան և գիւղամէրի բոլոր գործերը հմտութեամբ վարելու մասին պատրէ կարելի լինի լիակատար վստահութիւն ունենալ։

(Վերջը մյուս անգամ)

Մ. Ս. ԾՈՑԻԿԵԱՆ

Դեղատեսս

Թատրոն, երաժշտութիւն

ԵՒԴԻՆԷ, պիես 3 արարւածով.
Հեղ. Շերվանզատէի

Ո՛վ չէ ճեզանից մեղանչել։

Հայց մի՛թէ շատերը ունին սրտի այնքան անարատութիւն, որ կարողանան իսկապէս խոստովանել իրանց մեղքը և դղջալ։ Ամենքս էլ պատրաստ ենք ընկածին ոտնակոխ անել, հալածել, սակայն ոչ օգնութեան ձեռք կարկառել։

Ընդհատած, որ կանանց հարց, կանանց հաւասարութիւն խօսքերն սրդէն կորցրել են իրանց նշանակութիւնը և ամենքս էլ այսօր կնոջ նայում ենք ինչպէս մեզ ըստ ամենայնի մի հաւասար րնկերի, բայց իրականութեան մէջ դեռ տատանում ենք այդ հաւասարութիւնը ճանաչելու։ Ֆասարակական կարծիք, տրադիցիաներ և նրման խօսքեր լաւ զէնքեր են տա-

մարդիկներիս համար կանանց մեզ ուրիշ ցնելու։ Եւ որ աւելի զարհուրելին է, եթէ հորիզոնի վրայ երեւում է պայծառ, յստակ մի լոյս, մենք պատրաստ ենք այդ երեւոյթը, սրշայոյսի այդ կարապետը, համարել անբնական։

Տրադիցիա, հասարակական կարծիք, օրէնք։ Հետապրոգրեսական է ոմերը են դրանց կազմողները։ Անկասկած մի խումբ մարդիկ, յատկապէս իրանց կաշւի պաշտպանութեան համար։ Մարդիկ, որոնք ամեն կնոջ, յանցանք կարողանում են ճանկել։ Կարողանում են իրանց այլի դերանր թագցնել, բայց ընկերոջ այլի գլխին մի աննշան կէտը խոշորացոյցներով մեծացնել։

Ճարպատ, սիրող եղբօր վեհանձն քայլը դիւր չէ գալիս տրադիցիաների կոմմնակից գրոջը և նա եղբօրից պահանջում է որ ոչ թէ Ների իր իսկապէս անպրատ, բայց անշուշտ բոպէական հրապոյրին անգոր եղած կնոջը, այլ բաժանւի նրանից։ Ասպահարգանն Ինչ հեշտ վճիռ։ Եւ դրա պէս կանայք ուրիշ կերպ սկի չեն էլ կարող վարուել։ Բայց հնար գտէք մտնել այդ տալի ներքին աշխարհը, տեսէք քանի քանի մեղքեր, գիտակցաբար նա կատարած կրլինի... Յիշեցէք Օստրովսկու Կատերինային, այդ աստուածավախ կինը և նրա տերեսից հաչելի, ներքինից Ծիլի» տալը։ Նոյն տպերն են և բոլոր տալերը...

«Եւգինէն» տարբերում է Օստրովսկու Կատերինայից նրանով, որ խոստովանում է, գոչում ոչ թէ Աստուածանից վախենալով, այլ հէնց ինքն իր առաջ իրան մեղաւոր համարելով։ Կատերինի մարդը ապուշ է, իսկ Ալաւերդեան ինքնաճանաչ ու պարտաճանաչ իրաւաբան։ Նա եթէ պաշտպանում է դատարանում ուրիշների իրաւունքը և յաճախ իսկ տեսնում, թէ ինչպէս դատաւորները մեղանչում են ճշմարտութեան դէմ, մինչէ նոյն վայրկենում երբ ինքն է մեղադրեալի և պաշտպանը և դատապարտողը, կարող է մեղանչել ճշմարտութեան դէմ։ Անբնական կըլինէր այն, եթէ այլ վճիռ կարդար իրաւաբան Ալաւերդեանն իր մեղաւոր կնոջ։ Եւ ինչ է այդ անարատ կնոջ մեղքը։ Որ նա մի անգամ խաբել է անարդ հրապուրողից։ Իսկ քանի քանի անգամ նոյն իսկ ինքնաճանաչ, ազնիւ Ալաւերդեաններ նետել են նոյն մըթնոլորտի մէջ։ Ինչու մեզ տգամարդիկներիս պիտի Ների, իսկ կանանց՝ ոչ։ Որովհետև տրադիցիաներն են այդ պահանջում, հա՜

Ո՞րն է աւելի լաւ—խղճի խայթից ազատ լինել, թէ հասարակական կարծիքից դատապարտւել։

Եւ տիկին Ալաւերդեան խոստովանեց ամուսնուն իր մի անգամ գործած մեղքը ու արժանացաւ նրա գուտ քրիստոնէական ներողութեան։ Այնուհետև նա կնոջը բիւր անգամ աւելի պիտի սիրէ։

Պ. Փիրվանգադէի այս նոր «Եւգինէ» պիէսը այլի ընկնող մի գոհար է հայ թեպետուարի համար։ Նրա ճաճանչաւէտն են՝ 1) Ազնիւ իդէա, 2) Տիպերը շատ կենդանի, 3) Պիէսը ձղձղած չէ, բեմական է, 4) Սկզբից մինչև վերջը հանդիսականը լարած ուշադրութեամբ հետևում է կենդանի գործողութիւններին և վարագոյրը իջնելիս հրճւում է ուրախութիւնից բարերեր վախճան տեսնելով։

Բովանդակութիւնը՝ փաստաբան Ալաւերդեանի (Աբէլեան) հարուստ կահաւորած դահլիճում երեկոյեան հաւաքած հիւրերը թէյ են խմում և սենկուէներով, բամբասանքներով զբոսնում։ Հիւրերից միսը՝ տ. Ղալամքարեան (Սեւոեան) դիտմամբ լսօք է բանում նոյն օրերը դատարանում քննած ոմն Արաբաջեանի գործի մասին, որ մեղադրում է կնոջ հետ կոպիտ վարուելուն համար, որը ստիպած ինքնասպանութիւն է գործել։ Տ. Ղալամքարեան իբրև շատ մօտից տեղեակ այդ եղելութեան,—կնոջ ինքնասպանութեան պատճառը համարում է նրա օրհորդ եղած ժամանակւայ մեղքերը։ Այս պատմութիւնը տ. Եւգինէ Ալաւերդեանի (Մայսուրեանց) վրայ սաստիկ ներգործում է և ուշաթափ է լինում։ Հիւրերը ցրուում են, իսկ բամբասէր տ. Ղալամքարեանը աւելի խորն է թափանցում և տ. Եւգինէի անցեալն էլ անարատ չէ գտնում։ Ինքը Եւգինէն իր ուշագնացութեան պատճառը կայծակից վախենալն է համարում։

Հիւրերի ցրւելուց յետոյ Ալաւերդեանը (Աբէլեան) կնոջից պահանջում է բացատրութիւն, նրա այնքան թախծալի, մտայոյզ, տարօրինակ դրութեան մասին, որ օր-օրի վրայ նա աւելի և աւելի է նկատում։ Եւգինէն խոյս է տալիս ամուսնուն բանարարութիւն տալուց։ Նրա ազնիւ զգացումները թոյլ չեն տալիս ամուսնուն խաբել, կամենում է խոստովանել, բայց ոյժերը չեն ներում։ Տեսնելով ամուսնու դէպի ինքը տածած անհուն սէրը, էլ աւելի է խղճահարւում, էլ աւելի զղում իր նսեմութիւնը և ամուսնու վեհանձնութիւնը, որ աշխատում է իր մէջ մեռցնել կասկածները։

Եկել է հրապուրողը՝ Գաբրօ Ազարեան (Պետրոսեան) և յաշատ Եւգինէից պահանջում է շարունակել նախկին ճաշակածը։ Բայց վշտաբեկ կինը տանից դուրս է անում անարդ հրապուրչին, աղաչանքին նրա ներկայութեամբ հրամայում անձնասպան հիւրեր չընդունել առանց կանխաւ իմաց տալու։ Այս հանգամանքն աւելի է խղճան լինում Եւգինէի համար օր-առաջ խոցոտուած սիրտը ամուսնուն բանալու։ Չէնց նրա այդ «լինել, թէ չլինել» ծանր րոպէում գալիս է դատարանից Ալաւերդեան շատ տրամադրուած, բայց գտնելով ամուսնուն դարձեալ ճնշած, մելամաղձ վիճակում, լսում է այս անգամ նրա խոստովանութիւնը։

Կնոջ վրայ ձեռք է կամենում բարձրացնել, բայց զսպում է ինքն իրան։ Նա սրտանց կամենում է ներել ամուսնուն, մոռանալ անցածը։ Բայց ահա այստեղ նրա քոյրը՝ Մարթա (Զաբէլ) եղբօր պատին նախանձախնդիր է հանդիսանում և աշխատում համոզել, որ բաժանւի նրանից և ոչ թէ Ների։ Այդ խորհուրդը աւելի է նետահար անում ճշմարտասէր Ալաւերդեանին։ Նա տանջւում է, տատանւում, չէ կարող այդ անել, որովհետև սիրում, պաշտում է Եւգինէին։ Յայտնում է ինքն իրան՝ «բայց իմ անկեալը .... Ինչու նա ինձ պիտի Ների, իսկ ես՝ ոչ։

Եւգինէն սենեակն է մտնում և յայտնում իր վճիռը, որ պնդում է հօր տունը։ Մինչդեռ Ալաւերդեան կամենում է նրա այդ քայլին դիմադրել, լսում է միւս սենեակից դայեակի մանկան «օրօրը»։ Ուշաթափ է լինում Եւգինէն և սթափւում իրան գտնելով ամուսնու գրկում։ Ընկնում է նրա ոտները։ Սրտաշարժ տեսարան։ Ալաւերդեան սրտանց ներում է կնոջը,

ասում որ այդպէս է իր համոզմունքը Թելագրում, իսկ քոյրը զայրացած եղբօր այդ վճռով՝ դուրս է գնում բոլորովին նրա մօտից։

Ամբողջ պիէսը գանգուած են գեղեցիկ շարիխներով, լեզուն ինչ ասել կուզի սիրուն, իսկ ստիլն ու ոճը գեղեցիկ։

Ներկայացումն անդաւ շատ բաւարար, կատարեալ տօնական։ Հեղինակին անթիւ անգամ բեմ հրաւիրեց ոգևորուած բազմաթիւ հասարակութիւնը, որ լցրել էր Արտիստիկ ընկ. Թատրոնը։

Դերակատարներից ամենից առաջ շատ և շատ սիրուն էր տ. Մայսուրեանց «Ենդինէի» դերում։ Այս չարգելի դերասանուհու առաջ՝ ճիշտն ասած՝ ես մեղաւոր եմ։ Թեր և դէմ կարծիքներ շատ էի լսել նրա մասին։ Իսկ ինձ տարաբախտաբար չէր աջողել մինչև այս ներկայացումը Նրան տեսնել մի պատասխանատու դերի մէջ։ Այս անգամ նրա ուզքից մինչև վերջը դերակատարութիւնը, շարժուածքը բոլորովին մտածուած էին, վայելուչ և չրնաղ։ Իսկ վերջի գործողութեան մէջ րոպէ առ րոպէ հոգու աւելի և աւելի րնհաւիլը, ներքին կռիւը, խոստովանութիւնը և նամանաւանդ ուշաթափելուց յետոյ կիրասթուի ամուսնու ոտներն րնկնիլը՝ կատարեալ chef d'oeuvre էր։ Չնորհաւորում ենք չարդելի տիկնոջ բեմական այդ առաջադիմութիւնը։ Ուրախ ենք մանաւանդ, որ այդ դերը կատարեց ոչ թէ տ. Սիրանոյշ, որ անշուշտ իր միջնադարեան լայ ու կոծով, ձեռքերի, մարմնի անոեղի և տգեղ շարժմունքներով սիտի նսեմացնէր «Ենդինէի» տիպը,—այլ տ. Մայսուրեանց, որ իսկապէս կարող է լաւ դերասանուհի լինել, եթէ նա ամեն անդամ այդքան բարեխղճաբար ուսումնասիրի դերը և այդքան էլ հետը թափանցի ու րմբռնի ստանձնածի իմաստը։ Պ. Աբէլեան Ալաւերդեանի դերում հզօր ընկերակից էր տ. Մայսուրեանցի աջողութեան, միւսներն իրանց դերերի մէջն էին։

Քննադատել, խօսել պիէսի բացասական, թերի կողմերի մասին,—կընշանակէր ամեն մի իսկապէս լաւ ստեղծագործութիւն գիտակցաբար նսեմացնել։ Ինչու չէ, կարելի էր աւելի հետաքրքրական դարձնել պիէսը, կողմնակի խարդաւանանքներ մտցնելով։ Նոյն իսկ այդ տալի-Մարթայի հակատիպ պատկերը հանդիսականին աւելի րելիէֆ ցոյց տալու համար, ներկայացնէր նրա կուլիսային կեանքը՝—խաբող, ներքուստ ամեն չանցանք և կեղտ թագուն գործող, իսկ արտաքուստ անարատ և պաշտպան տրադիցիանների։ Կամ թէ այդ անարգ հրապուրիչ Գաբրօ Ազարեանի անփորձ «Ենդինէի» մեղքի մէջ դնելը ցոյց տուէր։ Դրանցով ոչինչ չէր աւելանալ պիէսին, ընդհակառակ կընսեմանային Ենդինէի և նրա ամուսնու տիպերը, որ պիէսի րնդհանուր հիմքն են կազմում։ Կաւելանար մի աւելորդ գործողութիւն։

Եթէ իմաստակից Լէօնկօալի իր Պիմոսներ օպերայի համար չըստացաւ որոշուած մրցանակը, այլ տրուեց Գիւղական Ասպետ օպերայի հեղինակ Մասկանուն, դլխաւորապէս նրա համար, որ վերջինս կարողացել էր իր ողբերգութիւնը մի գործողութեան մէջ ամփոփել։ Բայց մօտից ծանօթ է Լէօնկօալոլու և Մասկանիի հետ, նա միայն գիտէ առաջնի ստեղծագործութիւններին և նրանց իմաստի առաւելութիւնները Մասկանիի համեմատութեամբ։

Tigo

—

Նոյեմբերի 9-ին, ուրբաթ, Թիֆ. Արբունական թատրոնը տօնելու է իր յիսնամեակը։ Այդ երեկոյ օպերային թատրոնում լինելու է հանդիսաւոր, պատշաճ ներկայացում։ Տրուելու են զանազան օպերաներից պատկերներ և այլն։

—Իշխան Վ. Վ. Բարեատինսկի, «Сѣвер. Кур.» (Խափանուած) լրագրի խմբագիրը, մի պիէս է գրել «Перекатъ» վերնագրով, որ շատ մեծ աջողութիւն է ունեցել Պետերբուրգում և այնտեղի լրագրները մեծ գովեստով են լսօսում այդ ստեղծագործութեան մասին։ Սքանչելի է մանաւանդ գաղափարը։ Մեր ընթերցողներին կծանօթացնենք այդ պիէսի բովանդակութեան հետ։

ԳԻՒՏ Ա. Ք. ԱՂԱՆԵԱՆՑԻ ԴՐԱԿԱՆ-ՀՐԱՏԱՐԱԿՉ. XXV-ԱՄԵԱՅ ՅՕԲԵԼԵԱՆԸ

—

Մեր արդի քահանաների մէջ Գիւտ ա. ք. Աղանեանց մի բացառութիւն է իր յարատև և ժրաջան աշխատասիրութեամբ հայ գրական անդաստանում։ Մինէ Ներս. դպրանոցը քիչ աշակերտներ է տուել, մինէ մենք քիչ ունենք նոյն իսկ բարձրագոյն հոգևորականներ։ Բայց ո՛վ է Գիւտ քահանայի գէթ մի տասներորդը արել հայ դրականութեան համար։

Մենք կարող ենք համաձայն չլինել Տ. Գիւտի ուղղութեան, հայեացքների հետ, բայց յարգանքով, նոյն իսկ պատկառանքով չվերաբերուել քսանևհինգ տարի համոզմունքով աշխատող դէպի մի հայ գործիչ, այդ կրնշանակէ լինել եսասէր, խաւարամիտ և չարակամ հայ գրականութեան, հայ հասատատութիւնների։

Բայց մի հարց։ Հետաքրքրական է, ինչով է մեզաւոր Տէր-Գիւտը։ Ինչի մէջ է երևացել նրա չետադիմութիւնը։ Արդեօք նրանով, որ գրել է Մեղու Հայաստանի լրագրում, աշխատակցել է Արձագանքին։ Կամ գուցէ նրանով, որ հրատարակում է Լումայ և իսկապէս թանկագին գանձ Գիւան Հայոց պատմութեան։ Կամ գուցէ, որ այսօր սիրելին է Հայոց Կաթողիկոսին։

Թէև շատ համեստ, բայց վայելուչ կատարեց անցեալ կիրակի, հոկտեմբերի 28 ին Տէր-Գիւտի XXV. ամեայ յոբելեանը։ Կէսօրից սկսել էին ժողովել յոբելեարի բնակարանը զանազան պատգամաւորութիւններ, քահանաներ, դպրոցների ուսուցիչներ, գրականութեան և մամուլի ներկայացուցիչներ։ Ժամը երկուսին մօտ Վեհափառ Հայրիկի շնորհաւորական կոնդակը բերին չորս վարդապետներ և իսկոյն սկսեց հանդէսը։ Ուսումնասէր Վեհափառի սրբատառ կոնդակը ընթերցումից յետոյ, կարդացեցին ուղերձներ՝ Թիֆլ. Հայ քահանաներից, կարգադրիչ մասնաժողովից, ծխականներից։ Ապա կարդացին բազմաթիւ ստացած շնորհաւորական հեռագրներ՝ Կ. Պոլսի սրբազան պատրիարք Օրմանեանից, սրբազան արքեպիսկոպոսներից՝ տ. տ. Սուքիասից,

Ներսէսից, Գէորգից և Արիստակէսից (Թաւթեան), Եպիսկոպոսներից՝ տ. տ. Մակարից, Զիրակունից, Սաթունեանից։ Գէորգեան ճեմարանի տեսչից և ուսուցիչներից, Ղարաբաղի թեմ. դպրանոցից, ս. Պետերբուրգի քահանաներից և հասարակութիւնից, և այլն և այլն։ Ներկայ էին Թիֆլ. հրատարակող լրագրների և հանդէսների ներկայացուցիչներ՝ «Аргонавтъ», «Кавк. Вѣст.», «Нов. Обоз.», «Նոր-Դար», «Тиф. Лист.», «Թատրոն», «Ազբիւր և Տարագ». իսկ «Արձագանքի» նախկին խմբագիր պ. Ա. Յովհաննիսեան ողջունեց իր նախկին աշխատակից յօբելեարին մի ճառով, դրատելով նրա գործունէութիւնը։ Հայր յօբելեարը զգացած պատասխանելով՝ շնորհակալութիւն յայտնեց, խոստանալով շարունակել իր ծառայութիւնն ազգին և նրա եկեղեցուն։

Ստացել էին հետևեալ ընծաները՝ Թիֆլ. հայ հոգևորականներից՝ ոսկի ժամացոյց, Ճխականներից՝ արծաթէ սերվիզ, ոսկէ գրիչ և մօտ 3000 ր., Կենդր. գրավաճառանոցից՝ արծաթէ սերվիզ, «Արձագանքի» խմբագրից՝ արծաթէ վազ, Ճխական Սարգ. Օթարեանից արծաթէ թանաքաման և գրիչ, Թիֆլ. գտնուող եպիսկոպոսներից և վարդապետներից՝արծաթէ կազմ յուշատետրը Աստրախանից պ.Ստ. Սերեբրակեանից արծաթէ գրիչ իր պարագաներով և այլն։ Յ. յօբելեարը ունի թարգմանած և տպագրած 30-ից աւելի գրքեր, գլխաւորապէս պատանեկական ընթերցանութեան համար, մի քանի աղօթատետրեր և դասագրքեր։ Թիւան Հայոց պատմութեան հրատարակութիւնն արժանացել է Կ. Պոլսի Սահակ Մեսրոպեան մրցանակին, իսկ Լումայ հանդիսին աշխատակցում են հայ գրական լաւ ոյժեր։

Գրական նորութիւններ

Ամսիս 15-ից «Аргонавтъ» շաբաթաթերթը հրատարակելու է ամեն օր։ Այդ թերթն ունի ամենօրեայ լրագրի բոլոր բաժինները։ «Аргонавтъ»-ի հիմնադիրը և լիազօր աշխատակիցը պ. Յովհաննէս Խաչատրեանն է, որ երկար տարիներ վարել է «Тифл. Лист.» լրագրում նոյն լիազօր աշխատակցի պաշտօնը։ ուրեմն և քաջ ծանօթ է ամենօրեայ լրագրի պահանջներին։ Յանկանալով նոր լրագրին աջողութիւն, մենք, յուսով ենք, որ „Аргонавтъ“-ը ի նկատի ունենալով Կովկասի առաջադիմութիւնը և ճշմարիտ բարոյական մտաւոր, տնտեսական զարգացումը, հեռու կլինի ամեն թաչիայական և նեղ դիտումներից։ Նոր լրագիրն ունի լաւ աշխատակիցներ և թղթակիցներ։

Ս Ո Ւ Ր Ո Ղ Ք Ա Մ Բ Ե Ր

Նոյեմբերի 1-ին, Նորին Օծութիւն Մկրտիչ I ամենայն հայոց կաթողիկոսը բարեհաճեց Կարսի երկաթուղու եղեկեան գնացքով մեկնել Ալէքսանդրապոլ, իսկ այնտեղից Ս. Էջմիածին։

—Վեհ. Կաթողիկոսը Երևանի թեմական դպրանոցի տեսուչ է նշանակել Մատթէոս վարդապետին։

—Անցեալ կիրակի Բագուում կատարել է Լազարեան ճեմարանի հիմնադիր Յովհաննէս Լազարեանցի մահուան հարիւրամեակը։ Ներկայ են եղել Բագուում գտնուող նոյն ճեմարանի նախկին սաները։ Տէր-Ներսէս Կարապետեանց հակիրճ ամփոփումով Լազարեանցի կեանքն և գործի ուրագիծն է տուել։ Դա ամեն մարդի ծանօթ և սրտի սիրելի մի պատմութիւն էր։

— Թիֆլիսի վաճառականութիւնը բացում է առևտրական ուսումնարան Ներկայ ամսից։ Ուսումնարանը կրտեղաւորի առևտր. դպրոցի շինութեան մէջ։ Առ այժմ բացում են առաջին և պատրաստական դասարանները, իրանց վերջնաց բաժիններով։

—Վերջին ժամանակներս Թիֆլիսում այնքան շատացել են սկսրլատինով հիւանդացողները, որ բժշկական-առողջապահիկ խորհուրդը վճռել է աւելացնել քաղաքային հիւանդանոցում վարակիչ հիւանդների մահճակալների թիւը։

—Պետերբուրգում առաջիկայ տարուց լոյս կրտեսնի մի նոր ամսագիր, կոյրերի համար։ Ամսագիրը պիտի տպւի ուռուցիկ տառերով։

—Կովկասեան ցուցահանդիսի կարգադրիչ ժողովը վճռեց դիմել պատշաճաւոր իշխանութեան, որ ցուցահանդէսը ձմեռս վակելով, նորից թողյատրւի 1902 թ. ամառը բացելու (մայիսից-սեպտեմբեր)։ Պատճառն այն է, որ եղանակների վատութեան պատճառով ցուցահանդէսը զգալի վնաս կրեց և բաւականաչափ դէֆիցիտ կունենայ, եթէ վակւի նոյեմբերի վերջին։

—Չաբաթ, նոյեմբերի 3-ին, Թիֆլիսի պանդան ազգութիւններից 157 հոգի նորակոչ զինուորներ երդումն ընդունեցին զինուորական ծառայութեան մէջ մտնելու։

—Այն լուրը, որ իբր շուտով փոփոխութիւններ են մտցնելու զեմստուոյին ինքնավարութիւնների մէջ, զուրկ է հիմքից։

—Ծաղիկների տօնը, որ անցեալ շաբաթ կատարեց Կովկ. ցուցահանդիսում, կատարեալ մի խայտառակութիւն էր, նոյն իսկ ոչ բաւագանային հանդէս։

—Թիֆլիսի ձիաքարշի տնօրէն պ. Բագոլէր, իբրև վորձ վճռել է թատրոնական ներկայացումների համար երկու վագոն յատկացնել, որոնք կրկանգնեն Սրբուհեանական և Արտիստ. ընկ. թատրոնների առաջ, մինչև ներկայացումների վերջանալը։ Չունևոր և միջին դասակարգի համար այս շատ սիրուն կարգադրութիւնը սկսւած է հոկտ. 31 ին։

—Իշխանուհի Մարիամ Թումանեան, «Кавказъ» ի ասելով դիմել է քաղաքային վարչութեան, նշանակել 1,0 0 րուբլի նպաստ իր կառավարութեան տակ գտնուող Թիֆլիսի առաջին գործադրձական արհեստանոցին, 20 նոր աշակերտուհիների համար տեղ բանալու. կամ թէ չի արհեստանոցի պահպանութիւնը քաղաքը վերցնի, թողնելով իրան (իշխանուհուն) նրա կառավարիչ, որ նա կրկատարէ ձրիաբար։

—Ինչպէս յայտնի է, վճռւած էր Կովկ. ցուցահանդիսում էլեկտրական լուսավառութիւնը վերջացնել, Այժմ կարգադրիչ յանձնաժողովը բաւականացել է մինչև ժամի ութը միայն լուսավառել։

Խառն լուրեր

«Temps»-ին հեռագրում են Բելգրադից, որ ամենահաւատատ աղբիւրից հաղորդում են, որ Սերբիայի թագաւոր Ալէքսանդր և թագուհի Դրագա մօտիկ ապագայում կրճանապարհորդեն դէպի Ռուսիա։ Նրանց կուղեկցեն մինիստր-նախագահ Վուիչ և մի քանի ուրիշ մինիստրներ։

—Բերլինից Ռուս. գործակալութիւնը հեռագրում է, թէ այն տեղեկութեանը, որ իբր Ռուսիան և Ֆրանսիան միահամուռ պահանջում են րէֆորմներ մտցնել Հայաստանում և եւրոպական նահանգներում, այնտեղ մեծ կասկածով են վերաբերւում։ Որոշ ժամանակամիջոցում այդ հարցի մասին կոնֆերէնցիա գումարելու նոյն իսկ նշաններ էլ չեն նկատւում։

—Համարեա միաժամանակ հէնց որ լսեց Մխիթէնի երեք նաւահանգստի գրաւումը, Կ. Պոլսի Ֆրանսիական հիւպատոսութեան խորհրդական Բապտը Դռանը հետևեալ վերջնագի-

րըն էր ու եւ լիակատար գոհացումն Լորանդոյին, ճանաչել Վրանսիական և նրանց հովանաւորութեան ուակ պոնուղ ուսա ծաւրանների և հիւանդանոցների իրաւունքը, վերանորոգումն հայկական անկարդ թխենների ժամանակ Վրանսիական պարոնների ուկնկեցներն և հաստատել նոր բազդիկան պատրիարքին։ Ի չգէս յայտնի է, այդ բոլոր պսհանջներին իրաւ բա ւրսրութիւն արևց և վրանսիական նատատորը հեռացաւ Սիրա չնազիրների ատելով, Թնկատելն վերանորոգեց Դամն հետ դիպլոմատական յարաբերութիւնները և դեսպան Կոնստանդնուպոլսոյ կրկին նատատորը նայ կ. Պոլսի հայկական հարցը, որի մասին այնքան ադմուկ էին բարձրացրել և սպառնում էին սուաջ բաշել, եթէ սուլթանը իրանց բաւարարութիւն չրտար, կրկին ընկու արխիւրը։

—Տրիպոլում, արտասահմանի թերթերի ասելով, տեղի ունեցան լուրջ անկարգութիւններ։ Հատ արաբական ցեղեր ապստամբեցին օսմանեան իշխանութիւնների դէմ և այլեցին Ամդունի և Զանզուբա գիւղերը։ Վալին իրր թէ բանտարկել է 30 շեյխի։

— —

Սուրհանդակ

Ն. Նախիջեւան. Ե. Շ. Նկուք կը կարդում մեզ, երգումներ կը տալիս հայց...

Ս.ՊԵ. Պուճ. Ման. Ձեր ցանկութիւնը կատարեցինք և ուղարկեցինք երկին։

Պալահանի. Ս. Ա. Գրում կը մեզ. «Փոխանակ հայհոյելուս ընթերցողներին եւ գնահատելի դարձնելու մեր թերթը, ընդհակառակն իմիներդ աշխատում եմ մզել նրա արժանիքը եւ այլն եւ այլն»։ Դուք էլ իրաւունք ունիք։ Երևի մենք ինքներս գտնում ենք, որ պէտք է նրա արժանիքը մզել և այդպէս էլ անում ենք։ Հայց քաւական է, մենք սկսում ենք զգալ։

Խմբագիր-հրատարակիչ՝
Տիգրան Նազարեան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հարկաւոր է Բագում

Ֆրանսուհի կամ գերմանուհի

ՄԻ ՎԱՐԺՈՒՀԻ

Որ իմանայ ֆրանսերէն, գերմաներէն եւ մուզիկա.

Տիմել Ցարագի խմբագրութեան. Տիմ. Ольгинская, № 31. 1—3

Լոյս է տեսել և ծախւում է արդէն

ՎԱՉԱՌ

Թրախան-բանասիրական ժողովածուն Նէրսէսեան

Թր. Զաճեանցի յիշատակին

Խմբագրութեամբ Վ. Փափազեանի

Արդիւնքի 2/3 մասը յատկացուած է օրքերին և 1/3 մասն աշխատակցող պ. պանեերին, ժողովածուի ծախքու իրաւունքը նոր միայն ստացած լինելով, սեպտեմբերի 25-ից պատան է գցւում բաժանորդների համար։

Ժողովածուի գինն է առժամ 1 ր. 50 կ. Թիֆլիսում, 2 ր. Թիֆլիսից դուրս։ Դիմել միմիայն «Տարագի» խմբագրատունը՝ պ. Արշակ Միհերեանին։ Ուղարկում է նաև վերոգիր գումարով գնողներին զեղչ է տնում։

ԱՐԱՐԱՏ

1901

Ա.ԻՄԻԱՔԻՆԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌԻ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՄԱԳԻՐ

Բաժանորդագինն է Ռուսաստանում 4 րուբլի, արտասահման 5 րուբլի։

Նոյեմբեր ամսից բաժանորդագրուելու յայտ և իրանց հին հասցէները։

Հասցէն Св. Эчміадзинъ. Типографическому Комитету, для Арарата։ Rédaction de la Revue «Ararat». Etchmiadzine (Caucase.)

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ

Բարոյական, ուսումնական, ար հասարակական բերը

Տարեկան բաժանորդագինն է 10 Ֆր —4 րուբլի։

Հասցէն A la Rédaction de la Revue «Hanïesse» Vienne (Autriche) VII/2 Mechitharistengasse, 4.

ՕՏԻՊՈՑՏ

«Ռմկաոս» վէպ բարձր-հայոց կեանքից. գինն է. . . . 2 ր.

«Ի ւ-կարապետ» վէպ հայկական ոլիկների կեանքից . . . . 1 ր.

«Բող. Եղիկ» վէպ հին հրաշ. կեանքից. . . . . 30 կ.

Պատմուածքներ վէպ Սպի պիւզացիների (Թուրքահայերի) իրական կեանքից . . . . . 30 կ.

Փոտանգներ Պոլի գաւառի (Թուրքահայերի, կեանքից. . 30 կ.

«Ծաւտան» ոդբերգ. օպերայի համար Թուրքահայոց կեանքից . 1 ր.

«Ծարաֆ» ոդբերգութիւն տանկպատ. կեանքից . . . 30 կ.

Հերսայի Ռատեր Թուրքահայերի կեանքից . . . . 30 կ.

Դիմել Թիֆլիսի Նիկոլաևական Երկաթուղու Կայարանում Տոմսերի եւ Տոմսերի հայ գրավաճառներին։

Գրավաճառները կարող են դիմել Նոյեմբ. Въ Нахичевань н-Д, въ Типографію Бр. Аваковыхъ, որոնց կրնեն սովորական զիջումն։

35—34

ОТКРЫТА ПОДПИСКА НА 1902 ГОДЪ
НА ЕЖЕД ПОЛИТИЧЕС. ЛИТЕРАТУРНУЮ и ЭКОНОМИЧЕС. ГАЗЕТУ
„НОВОСТИ“
И НА ХУДОЖЕСТВЕННЫЙ ЖУРНАЛЪ
„ПЕТЕРБУРГСКАЯ ЖИЗНЬ“

Изданіе акціонернаго общества „ГУТТЕНБЕРГЪ“
Подписка на „НОВОСТИ“ въ 1902 году

На 1-е (большое) изданіе

	На 1одъ	11 м.	10 м.	9 м.	7 м.	6 м.	5 м.	4 м.	3 м.	2 м.	1 м.
	р. к.	р. к.	р. к.	р. к.	р. к.	р. к.	р. к.	р. к.	р. к.	р. к.	р. к.
Съ пересылкой иногороднимъ	17 —	15 50	14 50	13 50	12 50	11 30	10 —	8 50	7 —	5 50	4 —	2 —
Заграницу	26 —	20 —	24 50	23 —	21 —	18 50	16 —	14 —	12 —	10 —	8 —	6 —	3 50

РАЗСРОЧКА платежа годовой подписной цѣны допускается: для служащихъ—по третьимъ черезъ ихъ казначеевъ, а для другихъ лицъ—по соглашенію съ конторою.

Деньги и письма адресуются: Петербургъ, въ контору газеты „Новости“ Б. Морская, № 17. Адресъ для телеграммъ: Петербургъ, „Новости“.

Условія отдѣльной подписки на иллюстрированный журналъ
„ПЕТЕРБУРГСКАЯ ЖИЗНЬ“
(Выходитъ два раза въ недѣлю)
Съ доставкою и пересылкою: за 1 годъ—6 р., на 6 мѣс. 3 р., на 2 мѣсяца—1 р.
(О.) 4—1

Дозв. ценз, 3-го ноября, 1901 г. Տպարան Կ. Յ. Մարտիրոսեանցի Тип. К. Мартиросіанца, Орб. № 1—2.